Ավետիք Իսահակյան

Որսկան ախպե՛ր, սարեն կուգաս

- «Որսկան ախպե՛ր, սարեն կուգաս,
Սարի մարալ կը փընտրես.
Ասա՛, յարա՞ք դուն չը տեսար
Իմ մարալը, իմ բալես.

Դարդի ձեռքեն սարերն ընկավ,
Իմ արևս, իմ բալես.
Գլուխն առավ, քարերն ընկավ
Իմ ծաղիկը, իմ լալես»…

- «Տեսա, քուրի՛կ, նըխշուն բալեդ
Կարմիր-կանանչ է կապեր,
Սիրած յարի համբուրի տեղ
Սըրտին վարդեր են ծըլեր»:

- «Որսկան ախպե՛ր, ասա, յարաք
Ո՞վ է հարսը իմ բալիս,
Ո՞վ է գրկում չոր գլուխը
Իմ մարալիս, իմ լալիս»:

- «Տեսա, քուրի՛կ, դարդոտ բալեդ
Քարն է դըրեր բարձի տեղ.
Անուշ քընով տաք գընդակն է
Կըրծքում գըրկեր յարի տեղ:

Սարի մարմանդ հովն է շոյում
Ճակտի փունջը մարալիդ,
Ծաղիկներն են վրրան սրգում,
Ազիզ բալիդ, խեղճ լալիդ»…

1902
Բալախանի